

# ՊԱՏՄԱԿԱՆ

ԴԱԿԻԹ ՓԻԼԻՍՊԱՑ

(Հարբացի)

Է. ԴԱՐՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ

Տարիներ առաջ «Արարատի» մէջ հրատարակել ենք Դաւիթ Փիլիսոփայի երեք ճառերը (1906 թ. Մարտ) և նրանց ուսութեասիրութիւնը (1907 թ. Յունուար, Մարտ և 1908 Փետր.)։ Ներկայիւս հրատարակում ենք նոյն Փիլիսոփայի մի այլ գրութիւնը, վերականգնելով նաև նախկին հրատարակածներից մէկի յօշոտուած բնագիրը։ Դէպի Բերլին կատարած ճանապարհորդութեան ժամանակ՝ 1914 թուին՝ Ն. Նախիջևանում Տ. Պօղոս Բեղելեանի տանը տեսանք մի ձեռագիր (Քարոզգիրք), որ ի միջի այլոց բովանդակում էր և մեր Դաւթի երկու ճառերը, գոցանից մէկը «Դաւթի Փիլիսոփայի. ի խնդրոյ Աշոտոյ պատրկի» վերնագիրն ունէր, իսկ միւսը՝ «Նորին. աշակերտի Թէոդորիափագոն կոչեցեալ. Առ երկարնակոն ընդդիմադրութիւն»։ \* Լուսանկարելով թէ այս և թէ Բերլինի ձեռագրի ճառերը, այժմ հսարաւորութիւն ունինք բնագրի մասին աւելի ճիշդ տեղեկութիւններ տալու։ Առաջ էլ կասկածներ ունէինք Բերլինի ձեռագրի հարազատութեան մասին, իսկ նորաքննութիւնը տեղում և լուսանկարի վերայ, պարզ ցոյց տուեց այդ կասկածի ստուգութիւնը։ Խնդիրն այս է, որ նախկին հրատարակութեան մէջ Աշոտ պատրկի խնդիրքով գրուած ճառը մասամբ պակասաւոր է և մասամբ միացած այն ճառի վերջաւորութեան հետ, որ հրատարակում ենք ներկայիւս իրեն նոյն հեղինակի չորրորդ ճառը,

\* Այս երկու ճառերը կան և վենետիկի Մխիթարեանց Ըօ, թ. 8 Ա. Ածոնց. Ջօնուսի Թրակիակի և Արմանու տոլկութեան. Պետրոգրադ. 1915 Կր. XXXVI.

շատ հետաքրքրական մեղ համար հեղինակի ուսուցչի անուան պահպանութեամբ:

Թէ յիրաւի «Ի խնդրոյ Աշոտոյ պատրի» զըռուած ճառը պակասաւոր է: Նախկին հրատարակութեան մէջ և լրիւ ու անեղծ է մեր ներկայ հրատարակութեան մէջ, այդ երեսմ է ճառի նախարանից: Այդուեղ հեղինակը յիշում է այն երեք հարցերը, որ տուել է նորան Աշոտ պատրիկը և յետադայում մի առ մի պատասխանում է առաջադրուած հարցերին: Երրորդ հարցի պատասխանը չունինք մեր նախկին հրատարակութեան մէջ, երրորդ հարցի պատասխանի մէջ յանկարծ ընդհատում է «ոչ ը մնէին զրանն յայն խմեքէ», որ ինչ ինքն եղեւ նախադասութեամբ, և ապա կցւում մի հատուած ժե զի՞նչ մասն է» սկսուածքով: Սորան հետեւում են երեք նոր հատուածներ, որոնց լուսանցքում ձեռագրի մէջ՝ զրուած են նրանց համարները, զ, է, բացառութեամբ ը-ի, որ միայն նշանով է ցոյց տրուած:

Արդ, Բերլինի ձեռագրի հէնց արտարին քննութիւնը ցոյց է տալիս, թէ լուսանցքներում պակասում են ա, բ, զ, դ և ե հատուածները: Մինչդեռ մեր նոր հրատարակութիւնը լրիւ տալիս է, թէ նախադրուած հարցերի պատասխանը, և թէ պարզում, թէ «զի՞նչ մասն է» սկսուածքով հատուածը և մուացած երեք հատուածները լուսանցքի թուահամարներով, շարունակութիւնն են նոյն հեղինակի մի այլ ճառի: «Առ երկարնակն ընդդիմագրութիւն» վերնագրով և «Անստացական բանն ած» սկսուածքով ճառը, յիրաւի, լուսանցքներում ունի ա, բ, զ, դ, ե, գ, է, ը, որպէս հատուածների թուահամարներ, ե. հատուածը՝  $1\frac{1}{2}$  տողից յետոյ «ԴՃ» ապականուի, և հետեւեալ հատուածները նոյնանում են մեր նախկին հրատարակութեան «կի՞նչ մասն է» հատուածի և շարունակութեան հետ, մինչև վերջը: Այսպիսով միանգամայն պարզ է, որ Բերլինի ձեռագիրը, որից կատարուել է մեր նախկին հրատարակութիւնը ոչ միայն պակասաւոր է, այլ և ընդունել է յաւելուածնոյն հեղինակի «Առ երկարնակն ընդդիմագրութիւն» ճառի վերջին կէս մասը:

Դաւթին նուիրուած մեր ուսումնասիրութեան մէջ (Արարատ 1907, Յունուար և Մարտ) ցոյց ենք տուել, որ նա է, դարու երկրորդ կիսի մատենագիր է, ժամանակակից Անաստաս կաթուղիկոսի (661—666) և Աշոտ պատրիկի (685—690): Հաստատ համարելով այս ժամանակը, նորա ուսուցիչ Թէոդորէտ դագոնը պէտք է ապրած լինի ոչ վաղ քան է, դարու առաջին կէսը: Այդ շրջանում Թէոդորոս անունով յայտնի անձնաւորութիւնները Հայոց մէջ հետևեալներն են. առաջին՝ Մաթուսաղայի աշակերտը և Կոմիտասի եղբօրորդին, որ այնքան կարևոր դեր կատարեց Եզրի միութեան խնդրում. երկրորդը Յոհան Օձնեցու ուսուցիչը կամ Թէոդորոս Քոթենաւորը, որ նոյն է համարուել, որ նոյն է համարուել առաջնի և երկրորդի հետ, չորրորդ՝ Մովսէս Քերդողի աշակերտը, յիշուած Պիտոյից գրքի մէջ, որի մասին ոչինչ չգիտենք: Այս Թէոդորոսներից ոչ մէկը չէ կարող մեր Դաւիթ Փիլիսոփայի ուսուցիչը լինել հէնց այն պարզ պատճառով, որ Դաւիթը անպայման հելենասէրների դպրոցին պատկանող մարդ էր և ենթակայ յունական լեզուի անմիջական ազդեցութեան: Թէոդորէտ (Թէոդորոս ըստ Վենետիկի Զ-ի) դագոնի մակղիբն էլ մեզ մատնացոյց է անում նորա յունական ծագումը: Կոմիտասի եղբօրորդի Թէոդորոսի դիրքը աւելի բարեկամական էր դէպի քաղկեդոնականութիւնը,<sup>\*</sup> ուստի և չէր կարող իրքե հայ՝ հակաքաղեկանականութեան ախոյեան այնպիսի աշակերտ ունենալ, ինչպէս մեր Դաւիթն էր: Իսկ Օձնեցու ուսուցիչը ժամանակի վերաբերութեամբ շատ շատ կարող էր մեր Դաւիթի ժամանակակիցը լինել, բայց ոչ ուսուցիչը: Մեզ մնում է Բիւզանդական դրականութեան կամ պատմութեան մէջ որոնել այդ անձը:

Բիւզանդական մատենագրութեան մէջ ի նկատի առնուելիք Թէոդորոսներից աւագագոյնը «վանահայր» և Փիլիսոփայ» կոչուածն է, որ 579—608 թ. թ. պէտք է մշա-

\* Երուս. № 1270, 391 թ. (Պատմութիւն) Յոհաննու Մայրագումեցւոյ՝ գրուածքը մանրամասնութիւններ է տալիս այդ մասին Տես դորա մի հատուածը «Շողակաթ» 1913, Եր. 107.

կած լինի Լեոնտիոս Բիւզանդացու ճառերը \*: Բայց քաղ-  
դեկոնութեան մեկնող Լէոնտիոսի ճառերի վերամշակող  
Թէոդորոսը չէր կարող հակաքաղկեդոնական Դաւթի ու-  
սուցիչը լինել, մանաւանդ որ ժամանակով շատ հեռու են  
նոքա միմեանցից:

Երկրորդը է. դարու առաջին քառորդում ապրող Թէո-  
դորոս Փառանի (Արաբիայում) եպիսկոպոսն է, մասնակից  
մի կամքի վարդապետութեան ծագման պատմութեան. Մերգիոս պատրիարքը նորա կարծիքն է հարցնում նոր  
վարդապետութեան մասին, որից պէտք է եղրակացնել, թէ  
նեղինակաւոր մի անձն էր: Հեֆելէլէն այս դէպքը 619  
թուից առաջ է ընդունում \*\*: Մենք ցոյց ենք տուել, թէ  
սխալ պիտի լինի Հեֆել-ի կարծիքը ժամանակի վերաբե-  
րութեամբ. Մերգիոս պատրիարքը դիմել է նորան և պա-  
տասխան ստացել ոչ վաղ քան 626 թուականը: Վարդա-  
պետութեան կողմից դժուարութիւն չկայ սորան մեր  
Դաւթի ուսուցիչը համարելու, եթէ ժամանակի և տեղի  
հեռաւորութիւնը (Դաւիթը ապրում էր դեռ ևս 685 թուից  
յետոյ) միանգամայն անհաւանական չդարձնէր այն, մա-  
սնաւանդ, որ պատմութեան մէջ նա իւր որոշ մականունն  
ունի, որ ոչ մի առնչութիւն ունենալ չէ կարող Դաւիթ  
փիլիսոփիայի ուսուցչի «գագոն» մականուան հետ:

Երրորդ Թէոդորը կ. Պօլսի Պօլոս պատրիարքի (639  
—654) դիակոնն ու սինոպիկարիոնն էր, հոեսոր և  
կոչուած, կողմանակից մի կամքի վարդապետութեան և  
մասնակից վէճերին, ինչու և իւր պատրիարքը: Նորա  
երկու Առօրիա յիշուում են Մաքսիմոս խոսանվանողի եր-  
կերի մէջ, որոնցից մէկի պատասխանը գրել է վեր-  
ջինս 642 թուից յետոյ†: Վարդապետութեան կողմից

\* Krumbacher. Geschichte der Byzantinischen Litteratur. München, 1897. կր. 56.

\*\* Hefele. Conciliengeschichte III. 1877. կր. 125 — 126.

\*\*\* G. Owsepian. Die Entstehungsgeschichte des Monotheletismus. Leipzig, 1897. կր. 35, 47.

† Krumbacher. Անդ. 61 և RE<sup>2</sup>. յօդուած Maximus der Beken-  
ner, կր. 437.

գժուարութիւն չկայ նոյնացնելու Դաւթի ուսուցչի և  
թէոդոր դիակոնի անձնաւորութիւնները, մանաւանդ կոս-  
տանդին կայսեր Թիոս ունի ուստեած հրովարտակից յետոյ,  
որի հեղինակը անշուշտ Պողոս պատրիարքն էր։ Այս Են-  
թադրութիւնը հաստատուն հիմք կունենայ, եթէ ձեռաւ-  
դիբներից ստուգուի, որ «գագոն» բառը նւազու բառի  
եղծութիւն է, որի վերայ մեր ուշադրութիւնը դարձրեց  
այ. Ա. Յովհաննիսեան մասնաւոր խօսակցութեան մէջ,  
Ճիշդ է լեզուարանօրէն «գագոն» և «դիակոն» բառերի  
տառադարձութիւնը ընդունելի չէ, բայց անհնարին չէ  
գրիչների տղիտութեան այսպիսի սխալ ենթադրել։ Սրա-  
նով ի հարկէ խնդիրը վերջնականապէս լուծուած չենք  
համարում, և մեզ մնում է սպասել, նոր ընթերցաւածներով  
և նիւթերով պարզել այս ենթադրութեան ուղիղ կամ սխալ  
լինելը։

Դաւթի փիլիսոփայի դաւանաբանական դրութիւնների  
պատմական արժէքը մատնամշել ենք մեր նախկին յօդ-  
ուածների մէջ։ Դաւթի հակառակորդները Սկերեան և  
Յուլիանիտ ուղղութեան հետեւողներ են, Մանագկերակ  
ժողովում Օձնեցուն և Խոսրովիկ Թարգմանչին դրայեցնող  
կուսակցութիւնները։ Այժմ պէտք է մի փոքրիկ սրբագրու-  
թիւն, աւելի ճիշդ բացատրութիւն աւելացնենք մեր նախ-  
կին կարծիքի մէջ։ Հանդուցեալ կարապետ եպիսկոպոսի  
«Կոմիք Հաւատոյ» աշխատութեան հրաարակութիւնից  
յետոյ պարզ է, որ Յուլիանիտ վարդապետութեան նմա-  
նութիւն բերող ուղղութիւնը կարող էր հէնց Հայաստա-  
նում լինել։ Յոհան Մայրագումեցին իւր վարդապետութեամբ  
հեռու չէ Աղիկարնացու հասկացողութիւնից։ Դաւթի ճա-  
ռերի մէջ այս վարդապետութեան նմանութիւն բե-  
րող հակառակորդները, կարող են հէնց Մայրագումեցու  
շընանից դուրս եկած մարդիկ լինել և ոչ Աղիկարնացու  
անմիջական հետեւողներից։ Յամենայն դէպս մեծ նմա-

\* Գարեգին վ. Յովհաննիտ, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղար-  
շապատ, 1899, եր. 76—86, 175—6.

նութիւն ենք դանում Դաւթի և Խոսրովիկի (Բ. գլ. Ե. գլ. եր. 175 շ.) հակառակորդ մի կուսակցութեան մէջ։ Դաւթի ճառերի մէջ «Բնութիւն Բանին և մարմնոյն» մի առողները նոյն են, այնտեղ «զմարմինն աէրունական համագոյ Աստուածն Բանի» կամ թէ «մարմնոյն և Բան մի բնութիւն», ոզիանն մարմին և զմարմին Բան» ասողների հետ։ Դաւթի հակառակորդները Քրիստոսի ստացական մասը (մարմինը) միացած էին համարում ըստ «փոխարկութեան», իսկ Խոսրովիկինը «յեղմումք և փոխմամբ»։ Երկու հեղինակներն էլ ցոյց են տալիս, որ արարածից կամ ստեղծուածից չի կարող անարար կամ անստեղծ գոյանալ, բայց անփոփոք (Դաւթիթ) և անշփոթ (Խոսրովիկ) միացած իրար հետ, ուստի և նոքա բնութեամբ աարքեր են, հակառակ գէպքում Երրորդութեան փոխարէն չորրորդութիւն կստացուի։ Աշոտ պատրիկի Երրորդ հարցը և համապատասխան բացարութիւնը այս ուղղութեան է վերաբերում։

Դաւթի երկրորդ հակառակորդները Սևերեանք են, թէ նրանց խմբակցութեան գոյութեան մասին Հայաստանում ոչ մի ցուցում չունինք, բայց հէնց սկզբից՝ Ներսէս Բ-ից սկսած, ապա Կոմիտասի և Յոհան Մայրագումեցու գրուածներում, դատապարտուած էր նրանց վարդապետութիւնը։ Միակամեայց վէճերի առթիւ Կարճոյ ժողովում կատարուած միութեան մասին տեղեկութիւն չունինք, թէ ինչպիսի՞ տօդus vivendi-էր ստեղծուած հայ և ասորի եկեղեցիների մէջ։ Համականալի է, ուրեմն, և Դաւթիթ փիլիսոփայի բոնած դիրքը գէպի Սևերեան վարդապետութիւնը։ Այդ ուղղութեան գէմ նա մաքառում է իւր «Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց» գրութեան, Աշոտ պատըրիկին տուած բացատրական թղթի և այժմ հրատարակուող «Առ երկարանակն ընդդիմադրութիւն» ճառի մէջ, պաշտպանելով անապականութեան վարդապետութիւնը։

Բացի այս երկու ուղղութիւններից Դաւթիթ մաքառում է և մի երրորդի գէմ՝ «յերկուց բնութեանց միացեալ» ասողների։ Առանց Դաւթի հակաճառութեան մանրամասնութիւնների, որոշ զաղափար կազմել չէինք կարող

երրորդ կարգի հակառակորդների մասին, չէ ծնօ և լի կամ չէ ծնօ փոքրաց և լի (յերկուց մի կամ յերկուց բնութեանց մի) բանաձեր յատուկ է կիւրեղ Աղէքսանդրացուն\* և ուրիշ ուղղափառ հայրերի. ապա ուրեմն և Հայոց ուղղափառութեան պաշտպան Դաւիթը ոչինչ չպիտի ունենարդէմ ասելու. բայց նորա բացատրութիւններից երեսում է, որ «յերկուց բնութեանց միացեալ» ասողները աղանդաւոր և միակողմանի հասկացողութիւն ունին մի բնութեան վարդապետութեան մասին. Բանի հետ նոքա միացած չեն համարում կատարեալ մարդը, այլ նորա մի մասը, այսինքն նոքա իրենց վարդապետութեամբ յիշեցնում են Ապօղինարի վարդապետութիւնը:

Վերջինս կամենալով արիսականութեան դէմ պաշտպանել նիկիականութիւնը, ինքն էլ ծալրայեղութեան մէջ է ընկնում: Արիսականութիւնը Բանի հետ միացած համարելով մարդկային մարմինը (σαρξ), զանազանութիւն էր դնում մարդկային և աստուածային գործողութիւնների մէջ և մի տեսակ երկւութիւն ընդունում: Ապօղինարը դորա հակառակ միութիւնն է շեշտում, պնդելով, թէ երկու կատարեալ մի լինել կարող չեն (Յնօ տէկէտ և շահաւանական ծանրաւում): Քրիստոս ընդունել է ոչ միայն մարմինը (σαρξ), այլ և ոգի (ψυχή), իսկ աստուածային Բանը բոնել է մարդկային մտքի, բանականութեան (πνεῦμα, νοῦς) տեղը, նաըստ էութեան մարդ չէ, այլ նման է մարդու (ώς άνθρωπος). Նորա մէջ պակասում էր այն, ինչ որ մարդու մէջ էականն է՝ բանականութիւնը, միտքը (πνεῦμα, νοῦς), ուստի և ազատ էր մեղանչական լինելուց: Այս ձեռվ մարմինը միացել է Բանի հետ և կատարեալ միութիւն կազմել. ուստի և պէտք է ասել մի բնութիւն Քրիստոսի, աստուածային և մարդկային մասերից այնպէս միացած, որ իւրաքանչիւր կողմի յատկութիւնը փոխադարձաբար գործադրել կարելի է միւսի համար: Ապա ուրեմն նա ոչ կատարեալ

\* Loofs, Dogmengeschichte 1893, կը. 174. Harnack, Dogmengeschichte, 1998, կը. 207.

մարդ էր և ոչ կատարեալ Աստուած, այլ երկուսի միջինը, նմանութեամբ դից և մարդկանց կամ կենդանիների խառնուրդից առաջացած էութիւններին (Մոցաւարօչ, եղջերաձի, ջորի):\*

Այս բացատրութիւնից պարզ է, թէ Դաւիթ պաշտպանու է մի բնութեան վարդապետութիւնը այնպիսի ծայրայեղ հասկացողութիւններկ դէմ, որոնք Ապօղինարեան ծագում կան նմանութիւն ունեին: Պաշտօնական Ապօղինարեանք է, դարում ոչ Հայաստանում և ոչ մի այլ տեղ գոյութիւն չունեին. նոքա վաղուց միացել էին մի բնութեան վարդապետութեան հետևողներին, Դաւթի բացատրութիւնից էլ երեսում է, որ այդ հակառակորդները, իսկական Ապօղինարեանք չեն, այլ «Ապօղինարի հայնոյւն» հաւասար են», այսինքն նրա նմանութեամբ մի ծայրայեղ ուղղութիւն: Ո՞յք են դոքա, և պատմութեան մէջ երեսն եկած միաբնական որ ուղղութեան և անուան տակ պիտի դնել, դժուար է առ այժմ ասել. հաւանորէն յուլիականութեան մօտեցող ծայրայեղ միաբնութիւն կամ Մայրագոմեցու աշակերտների շրջանից գուրս եկած մարդիկ: Այս վերջին ենթադրութեան համար մի թեթև կոռուպն ունինք հէնց Մայրագոմեցու մի ճառի մէջ. «Իսկ նոր Աղամանուանի Քրիստոս, զի ոչ եկն հին մարմնովն, այլ ի նմանութիւն մարմնոյ մեղաց, իսկ նմանութիւն և ճշմարտութիւն ոչ մի են»: \*\* Վերջնական եզրակացութիւնների հասնելու համար հարկաւոր է աւելի դրական նիւթեր, քան մենք ունինք ձեռքի տակ:

Դաւթի թղթերից մէկը գրուած է, Անաստաս կաթողիկոսի հրամանով. միաբանութիւնը ում հետ պիտի լինէր. արդեօք Միակամետյց, կամ պետական եկեղեցու հետ Տուրօ ուրի ութեած հրովարտակի հիման վերայ, որ կոստանդն. նորոգել կարող էր և նոր կաթողիկոսի ժամանակ: Հա-

\* Hefele, Conciliengeschichte երկրորդ հրատ. I 729. II 142. R.E. I եր. 530. Harnack, DG. § 40.

\*\* Կարապետ եպիստոպոս, Կոկ հաւատոյ. Եջմիածին. 1914 եր. 252.

ւական չէ. որովհետեւ 661-ին, երբ Մուշաւիան նորից հայերին առաջարկում է արարական իշխանութեան երթարկուել, կենդանի էր զեռ Ներսէս Շինող. Անաստասի կաթուղիկոսութիւնն ընկնում է, հաւանօրէն, արարական տիրապետութեան սկզբին կամ առ առաւելն Բիւզանդական տիրապետութեան վերջին ամիսներին, այսինքն 661-662 թ. թ.: Այդպիսի խառնակ և կարծ ժամանակում հաւանական չէ և ոչ հնարաւոր միութեան խնդիր յարուցանել: Աւելի հաւանական է Անաստասի յարուցած միութիւնը Սեերեանների հետ լինէր կամ ներքին երկպառակութիւնների դէմ: Աշուտ պատրիքի տուած հարցերը և Դաւթի պատաժամանը ապացուցանում են, որ վէճերը շարունակուել են և յետոյ՝ մինչև դարու վերջերը և ապա մինչև Մանագկերտի ժողովը: Այսպիսով, տեսնում ենք, Դաւթի ճառերը կարևոր նշանակութիւն ունին Հայոց եկեղեցու դաւանաբանութեան զարգացման պատմութեան մէջ, որքան և քիչ են կամ անորոշ նրանց մէջ պատմական տուեալիները:

Մենք ցուցումներ ունինք, որ Դաւթի փիլիսոփայի (Հարքացու) աշխատութիւնները սրանցով չեն սահմանափակում, և յոյս ունինք, թէ հնարաւոր պիտի լինի տւելի և աւելի պարզել թէ հեղինակի անձնաւորութիւնը և թէ նորա անուան հետ կապուած խճողուած աւանդութիւնները:

Հայր Բեդեանի ձեռագրի նիւթը թուղթ է, 14,3×9,3 սմ. մեծութեամբ, բովանդակութեամբ խառը, մեծ մասը քարոզներ, ճառեր են, որոնց մի մասը զրուած նոտրզը, 1401 թուին Յակոբ Ղրիմեցու ձեռքով, ինչպէս ցոյց է տալիս հետեւեալ յիշատակարանը.

Զմեղւց զրիչս զՅակոր մեղուցեալ միայնակեացո Ղրիմեցի, զսիրողս միայն բանի, և յիրէն մին (?) հեռի, աղաշիմ յիշել ի տը ա՞ծ ողորմի ասլ՝ մեղուց հոգոյս և տը զձեղ յիշեսցէ յողորմւին իւր ամէն. ի թվիս: ՊԾԳ. զրեցի զայս սկը հը մքն յետոյ զզրել գրոցս:

Գարեգին ծ. վարդապետ

Գաւրի Փիլիսոփայի. և խնդրոյ Առույ պատրկի:

Բան, զոր հարցէք, ովք բարեփառէ հարցափորձող<sup>4</sup> ածագան տըր իմ, թէ զի՞նչ միտք մի բնուի՞նչ ասելն առնէ բանին և մարմարոյն, և զի՞նչ որ երկուո՞ն ասեն բնուի՞ս յետ միանալոյն բանին ի մարմին իւր. և որ՝ պի՞ ինչ յերկուց բնուի՞ց միաց՝ ասելն իցէ զբնուի՞ս որդոյն ա՞յ յա՞ծուե՞նէն և ի մ՞զկուե՞նէն. և եթէ որ է ճշմարտուի՞ս որով եկ՝ զցի ա՞յ խոստովանի զուղիդ հաւատն:

Լուծումն այսպի՞ս ինչ է այդոցիկ խընդրոց, որ քան կարճ ի կարճոյն մարթի յիշեցուցանել:

Որք մի ասեն բնուի՞ս բանին և մարմարոյն, կատարեալ են ամբարիշտք. զի մարմինն ի կուսէն է, և կոյսն դռւմար Դաւթի և Արքահամու, ը՞ ասաց առ՝ քը՝ զը՝ ս ի հրէից ըս՝ մարմարոյ. և եթէ զզաւակէն Արքահամու բուռն հարկանէ<sup>5</sup>: Այլ Արքահամ և մ՞զիկ ի նախահօրէն Աղամայ և յերկրէ ունին սլիլլըն, իսկ բանն ա՞ծ հոգեղին ստեղծիլ Աղաման, ք՞ զի ա՞մ որ ինչ եղեկ բանին, ասէ, թոհաննէս, և առանց ն՞ր եղեկ և ոչինչ որ ինչ եղեն<sup>6</sup>: Եւ արդ՝ զի՞ ա՞յ անեղի և արարչի և հողոյ, ժամանակ՝ ար՝ բելոյ ի նմանէ մի իցէ բնուե՞լու իսկ չորրէ գու՞ինն ս՞ս առնին ս՞սի խոստովանողք զեր՝ բրուե՞ին, զի մի բնուի՞ն է ա՞յ հաւրճ և բանին և ս՞ր հոգոյն, և երեք առանձնաւորուի՞ք. մի բնւե՞ի հայր և որդի և հոգին ս՞ր, ապա թէ և մարմարոյն և բանին մի բնուե՞ի է, ը՞ բանին և հաւր մի է բնուե՞ի և զիւր համարուն մարմինն զգեցաւ բանն. չորք ս՞ր նախ ք՞ զմիանալ բանին և մարմարոյն լինին. հայր և հոգին ս՞ր, բանն ա՞ծ և մարմինն, Այլ միանալ բնւե՞ցն ոչինչ այլ նշ՝ նկէ, եթէ ոչ, զի աւտար նախ միմեանց էին բնուի՞քն, որ յետոյ միացան մարմիալովն ա՞ծն բանի. ապա յիրաւի եղիցի մեղ զայնպիսին խոստովանողս անուանել կատարեալ ամբարիշտք:

Իսկ որք բ՞ ասեն բնուի՞ս յետ միանալոյ բանին և մարմարոյն, զմինն ա՞ծ սոսկ արտաքոյ ք՞ զմասունս մարմարոյն, անտես և անշօշափ, հզաւր և զիտակ, և զա՞մ (զնօր զնին ի վեր)<sup>7</sup>\* ք՞ զկարիս՛: Իսկ զմիւս բնուի՞ն մ՞զ մահկանացու, տղէտ, ան-

\*

\*\* Յովին. Ա. 5.

\*\*\* Փակաղծի մէջ առնուած բառերը լրացնում ենք Եերինի № 54 մեռաղից. 8. Բեղելիանի մեռաղի մէջ աեղը բաց է Խողնուած:

1 Եեր. 2 եռ. հարցափորձօղ. 2 բնւե՞ին. 3 Աղամայ. 4 եղեն. 5 չորրորդու՞ի. 6 եւ նօր. 7 զկարիս, եւ ապականւ՞ի եւ ման:

դաւր, ի ներքո ամ կարեաց և ապականուեց. և յետ, լու աւելի ամաց յառաւել քը զայս փոփոխել. բնուելի զայսպէհ<sup>2</sup> առողս թէպէտ և բանիւ ոչ, իրաւք երկուս ցուցանեն, բը թէ անձն մի համբաւեն, կոմ ոչ առեալ սք ասեն մարմին ի կուսէն. կոմ ի գոյացեալ նախ բնուել մուգոյն բնակւը մշտնջենաւորեցուցանեն ի մարմին զած բանն, որ ոչ այլ և այլ, բայց սոյն յայտէ, եթէ ոչ հաւատան, եթէ բանն մարմին եղեւ. զի եթէ հաւատալի էր նոց բանին մարմնանալ, ոչ բաժանէին զբանն յայն իմեքէ, որ ինչ ինքն եղէ<sup>\*</sup>, և զի արդ վարին ձայնիւ միանալոյ բնուեցն, զի եթէ ճշմարտեն զոր ասենն, զիամրդ բաժանէին, զոր միացուցանենն. ապա թէ անմիացեալ զբուել սկիտեն, ոչ պարտին այնպիսիքն միանալով վարել ձայնիւ բնութեցն. զի եթէ երկու կացին բնուելքն, ոչ միացան, ոչ միացեալքն ոչ կարեն առնուլ զասումն միուեն, իսկ զի ճշշտ միացան ի ձեռն հրաշափառ խառնմանն, բաւական է միանալդ անուն զանքանակուի ցուցանել բնուեցն, և զմիուել ինքեան. ապա նոք ամբարիշտ զինքեանս խոստովանին, որք ձայնիւ վարին միանալոյ, իսկ զիրսն զորմէ միանալն ասի, հեռագոյն ի բաց որոշեն յած և ի մող ըստ իւրաքչւր անկից:

Իսկ որ յերկուց բնուելց միացեալ ասեն զորդոյն այլ զբնուել, թերի նոք լսողացն զիւրեանց իմացուցանեն խոստովնուել, զի յերկուց բնուելց ասել մասն և մասն ի միոջէ և ի միւամէ նշնկէ բնուեցն, յորոց միանըն ասիւեւսու(այսպէս) հանկանակաւ բերեալ յածուենէ և ի մուգուենէ ասել, այլ ոմն բնուել բնաւորեալ զորդին ի մէջ ցուցանէ զած և մող, որոց կատարեալ այնպիսին կարէ զոլ և ոչ մող, վաս զի զմասն ինչ յայլ և ի մողոյ ունել, այլ ոչ զբովանդակն. որ զդիցազրունսն առասպելիցն հեթանոսաց ճարտարաբանքն ուրեմն կոնոյ ծնեալ բնուել ո ի զից և ի մողին խառնակուենէ. և զի ոչ մասն ինչ յածուենէ էր բանն. այլ կատարեալ մոծ, և մարմնանալն դորայ ոչ մասն մողոյ լինի, այլ կատարեալ մող. Անք կոմ տիմարուեն տոռամբ շաղեալք անհանճարս զինքեանս հրապարակեն. և կոմ թէ սոս իսկ զմուաւ ածեն մասն ինչ յածական և մասն ինչ ի մուգկական բնուենէ ի մի ածեալ տեղի միանալ զքս, Ապողինարի հայհոյւեն հաւասար են անաւընքն. զի զիւով ած և մող յոյմն մեր զտոր յս քս անկատար իմն բնաւորեալ իշխեցին հայհոյել օտար ք զած և զմող բնուելու

\* Այստեղից մինչեւ վերջը, Յերինի Զոր չունի. սորան կցուած է «Առ երկարանուլո» զրութեան երթրորդ կէս մասը «Եւ զիսչ մասն է» հատուածից սկսած.

1 փոփոխելու.

2 զայսպիսիս ասաւդա.

այսպիսի ասողքն, յոչէ ի գոյու՞ի եկեալ, և այլայլեալ զրնու՞ի որդոյն ա՞յ յայտնա՞ոլ ք՞րցեն. և յիրաւի են ը՞ նզովիւք ի նիւկիայ գումարեալ ս՞ր հարցն. զի ոչ զարհուրեցան զմարմնանալն ա՞ծ բանի յիշակիսոյ ծնունդ բերեալ նմանու՞ի:

Այլ եկեղեցի ք՞ի փախուցեալ յայսպ՞ի խոտորմանց, ուղիղ խոստովանու՞ր լուսաւորէ զծնունդս իւր. որք միանգամ ի մահ անդրք ք՞ի ա՞յ մերոյ մէլրտին\*: Ք՞ զի զիտէ եթէ բնու՞իքդ երկոքեան ա՞յ և մ՞ղկն աւտարք միմեանց էին յառաջազոյն, և որիշք ա՞մ հեռաւորու՞ր. որ՞ք ինչ ա՞յ արարչի և արարածոյ հողոյ 2 գայր ը՞ մէջ մարմնանալոյն ա՞ծն բանի լրով միացան. ք՞ զի որ ա՞ծն կտտարեալ ծնանէր յա՞յ հաւրէ նոյն մ՞դ բովանդակ՝ նա ի մաւրէ իւրմէ ի ս՞ր կուսէն եղեւ. ըս՞ որում և ա՞ծածին այս ասի կոյս և ոչ մ՞ղածին. Այսոքիկ նախնական աւանդու՞ր վերադասեալ ի մերոյդ յորդին ա՞յ յինքնատեսաց և ի սպասաւորաց ա՞ծն բանի եղելոյ մինչ առ մեզ պաշտեցաւ անդամք ք՞ի եկեղեցի ս՞ր: Իսկ եթէ նոր այժմ ք՞րզի ումեփ բ՞ձրագոյն, յայտնեսցի բան. ցուցցէ յածային գրոց և լուիցուք: Ք՞ զի ճշմարտուի՞ն ոչ զհակառակ կալ ինքեան, այլ զհաւանելն պահանջէ յառողջամիտ խուզողացն, միայն թէ ոչ հարը՞ահարեսցէ զլսելիս ստու՞ին զճշմարտու՞ն պերճացեալ ձեւ:

Նորին. Աշակերտի Թէոդորիտի դազոն կոչեցեալ.

Առ երկարնակոն ընդդիմադրու՞ի:

Անստացական բանն ա՞ծ ի մ՞զնալն յաւելուած էականի բնու՞ին իւրոյ ոչ արար կ՞մ ընկալաւ, և թէ մ՞ղկն բնումն առ գ՞ծեաց յաւելուած, զի երեխոցի մարդանալոյ ն՞մ պատճառն ք՞զի ոչ է թարց պկածնի, և աստուստ ծանիցի երկակցու՞ի և միու՞ին թարց փոխարկու՞ին. զի անստացականն օ ի ստացականու՞ի ոչ կարա նա (չ) փոխարկիլ, և ոչ ստացացակ՞նն. անստացական էանալ և յարարածէ անարար զոյանալ. և յաւելուած լինել ա՞ծային բնու՞ին. իսկ մ՞ղկային բնու՞իս հաւաստի յաւելուած առգ՞ծեաց. զի ի մահկանու՞ինէ անմահ արար, և յապականու՞ինէ անապական, և յերկրաւորւ՞նէ երկնային. և աթոռակից հօր ցուցաւ, և եր՞րդւ՞ին երբ՞ու՞ի մեաց և ոչ ընկալաւ յաւելուած:

Դարձեալ մի բնու՞ի բանին ա՞յ խոստովանելով կենդանոյ որդոյն ա՞յ ի կենդանոյ հաւրէն, իսկ զմիւս բնու՞ին հարկաւոր տաց միւսոյ ումեմն կ՞ղնոյ խոստովանել ի կ՞ղնոյ ումեքէ

\* Զորում «այսպիս».

2 2. հոյզոյ.

5 2. անստացանն.

\* Հո. 2. 3.

ծնեցելոյ և յումէ պատճո է, որ գհաւքն ունի տեղի, զի բնութիղ անուն ոչ ի վը մասին մղյն է. այլ ի վը բոլորին. և ոչ ի վը անգյին, այլ գոյացելոյն ըստինքեան և դադարման:

Դարձեալ մարիամ զբնութիւն մղոյն ըստինքեան գոյացուեն ծնաւ, եթէ զբնութիւն որդոյն այս ըստինքեան կատարելուեն ի հօրէ ի ձեռն մարմոյն կամ թէ մարմնաւորւենու Զի թէ ըստինքեան գոյացութիւն մղոյն ծնաւ, ըստ որում և բնութիւն չէ ամածին. իսկ եթէ զերկոսին բնութիւն ըստինքնակացուեն ծնաւ, երկը դամայր և ոչ միածնամայր:

Դժու զերկուս բնութիւն խոստովանելով յետ ի կուսէն ծնելուեն զերկոսին ալշտելի ասես, եթէ զմին. թէ զերկոսին, արարածոյ որդոյ և անկատարի երկրպագես և ոչ օտարանաս ի կռապաշտելիցն. իսկ եթէ միոյ բնութիւն մինն անգաշտելի մնայ, հեռացեալ ես ի փրկուենէն որ ի ձեռն մարմնին:

Դարձեալ զերկուս բնութիւն խամփելով, հարկաւորէ յերկոսին և մկրտիկ՝ յրած բնութիւն. և յանարարած բնութիւն, որ է ամբարջտութիւն (8) իսկ թէ ի հայր և յորդի և ի սրբ հոգի և ի մի բնութիւն մկրտիմք, յայտ է եթէ ի միւս խամփեալ բնութիւն ոչ մկրտիմք, որ է ուրացութիւն փրկուեն մերոյ. քզի որ միանգամ ի քս մկրտեցաք, ի մահ անդր նոր մկրտեցաք, ասաց, որ ասացն \* և ինքն թէ մկրտեցէք յանուն հաւը և որդոյ և հոգոյն սրոյ:

Դժու ապականութիւն ի մասանց բնութենէն մարմոյն, և զինչ մասն է, և եթէ մասն է և միացոյց զայ (8) իւր յարդանդի կուսին և այժմ ապականացու, զի զմիացեալն ոչ էթող, և եթէ էթող ըստքեզ յետ յարուեն, կիսամղէ և ոչ կատարեալ մղոյ, իսկ եթէ դատապարտութեն յանցանաց արկածք տանջանաց բնաւորեցան, իսկ յս ոչ անկաւ ըստ բանսարկուին իշխանութը, ուստի և յիւրոցն ասէ. առ իս ինչ ոչ գտանէ, \*\* զիմրդ տնաւրինէր ապականութիւն փրկութիւն ապականելոցս. այլ ահա մարմին նոր ոչ էտես զապակութիւն մղոքէն կնքեաց բանիւ. \*\*\*

Դժու եթէ ծնելութիւն և կաթնդիեցութիւն և աճելութիւն հասակի, և թլիատութիք և կրականութիք համայն և չըրչընք համայնք և խոցումն և մահ, և թաղումն ապականութեն ցուցակութիք են ըստ ձերոց աղանդաբանւեղ, և առաջի փրկութիւն ի ձեռն այսց մատակարերեցւ, յայտ է եթէ ոչ այս առ մեզ երախտիք զոն փրկանաւորութիւն, այլ ապականութեն զայս մեզ առգածեալ և յափշտակեալ ի բանսարկուին իշխանութենէ զայ (8) մեզ պաշտելի է, և երկրպագեալ զապակնութիւն և սմա առ կարդալ փրկիչ. Աւաղ յիմարւեղ, մղոյ-

\* Հունմ. Զ. 3.

\*\* Բողհ. ԺԴ. 50.

\*\*\* Սաղմ. ԺԴ. 40

կային ապականու՞ն ծնելու և յաջ խղցու՞ն հայր՝ զսերմն առն ծանեաք ի ձեռն կնոջ, իսկ ապականու՞ն մարմնոյ բանին և ծնելու՞ն զժ ասէք զոլ հայր ի ձեռն Մարիամայ, զի ի հաւըէն ծանիցուք զապականու՞ի:

Դձ՞ւ զՄարիամ ըս՝ բնուե՞ն իւրոյ զոյացու՞ն ասէք անապական զոլ, եթէ ըս՝ ծնընդհանն զբանն ա՞ծ մարմնց՞ւ եթէ ըս՝ բնու՞ն զոյացու՞ն ասելի է, ոչ իմանի ի մերմէ բնու՞նէս Մարիամ։ Իսկ եթէ ըս՝ ծնողու՞ն է անապական և է և ասի, զի մրդ ծնեալն ի նմանէ ապականացու։

Դձ՞ւ ապականու՞ն բնու՞ի ունի ըս՝ ինքե՞ն եթէ ոչ, զի եթէ բնու՞ի ստեղծուած ստեղծչի զայս և առնուլ ասելի, և միացուցանել ը՞ինքեան, իսկ եթէ ոչ ունի բնու՞ի ըս՝ ինքեան, ոչ ասի ստեղծած ստեղծչին, այլ ի պատրանաց թշնամոյն ներգ՞ծե ցաւ ի մ՞դն, յանձնիշխանու՞ն գ՞ծոց, կշատրմու՞ի ը՞ունել ի տ՞նէ իսկ ա՞ծ բանն զինքեան ստեղծուածն էառ և միացոյց իւրեաւ ոչ զբանսարկուին ներգ՞ծու՞ին։

Զայսոսիկ այսք խուզեն և ի հարցաքնու՞ի արկանեն, որք ի սահմանս դուզնաքեա մ՞դոյ իջուցանել զնա խոկան, իբրև զմի ոք ի հա՞րկց զոյացելոց ի տ՞նէ. ըս՝ որում և ոչ ա՞ծ մ՞դ լեալ խոստովանին, այլ ի մ՞դ ումն բնակիլ աստուստ և Մարիամ օտարանա զոլ ա՞ծածին։ և այս է Պաւղեա Սամուտացոյ նախասացու՞ն սահման. և որք ըս՝ այսմ ձայնակիցք, նախկինք և այժմուքս անյուսք և յողզողք, որք և զմի ա՞ծն զը՞ս ուրացեալք, ածեն ի վ՞ր անձանց զերագահան կորուստ, ըս՝ նախասացու՞ն առաքելոյն ա՞յ։ Այսպ՞ի խորհողսն տարագրէ կաթուղիկէ եկ՞ղցի, և մեք Եղիցին նզովեալ ի տ՞նէ յ՞սէ ք՞է ամմէն։

